ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 522522, ՖԱՔՍ (374-10) 525563

« _____ » _____ 2015 թ.

№_____

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար պարոն Ե. Զախարյանին

Ի պատասխան Ձեր 22.07.2015թ. №01/19.1/3889-15 գրության

Հարգելի պարոն նախարար,

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի 16.07.2015թ. №2327 գրության 2-րդ կետի 3-րդ ենթակետով ներկայացված հարցի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հայտնում է հետևյալը.

Հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու №0092 լիցենզիայի պայմանների բաղկացուցիչ մասը կազմող սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ անհուսալի դեբիտորական պարտքերն անհրաժեշտ հասույթի կազմում ներառվում են առաքված էլեկտրաէներգիայի արժեքի առավելագույնը 2%-ի չափով: Սկսած 2012 թվականից անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ծախսը հաշվարկվել և անհրաժեշտ հասույթի կազմում ներառվել է առաքված էլեկտրաէներգիայի արժեքի 1%-ի չափով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011թ. մայիսի 30-ին հանձնաժողովում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած խորհրդակցության արդյունքում կազմվել է արձանագրություն, և ընկերությունը պարտավորվել է գործադրել առավելագույն ջանքեր՝ անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ծախսը առաքված էլեկտրաէներգիայի արժեքի մինչև 1% չափը նվազեցնելու համար:

Տեղեկացնում ենք նաև, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ ընկերության դեբիտորական պարտքերի մեծությունը 2015 թվականի հունիսի 1-ի դրությամբ կազմել է 23795.32 մլն դրամ (ժամկետային՝ 15043.86 մլն դրամ), որից՝

- բնակչություն՝ 8629.5 մլն դրամ (ժամկետային՝ 5164.24 մլն դրամ),
- բյուջետային կազմակերպություններ՝ 748.25 մլն դրամ (ժամկետային՝ 529.79 մլն դրամ),
- արդյունաբերություն՝ 6474.01 մլն դրամ (ժամկետային՝ 3544.17 մլն դրամ),
- տրանսպորտի ոլորտ՝ 302.22 մլն դրամ (ժամկետային՝ 293.85 մլն դրամ),
- ոռոգման ոլորտ՝ 238.21 մլն դրամ (ժամկետային՝ 105.49 մլն դրամ),
- խմելու ջրի ոլորտ՝ 337.08 մլն դրամ (ժամկետային՝ 192.76 մլն դրամ),
- առողջապահական կազմակերպություններ՝ 211.32 մլն դրամ (ժամկետային՝ 125.09 մլն դրամ),
- ջերմամատակարարում՝ 65.58 մլն դրամ (ժամկետային՝ 0.27 մլն դրամ),
- կապի ծառայություններ՝ 413.66 մլն դրամ (ժամկետային՝ 376.73 մլն դրամ),
- այլ սպառողներ՝ 6375.49 մլն դրամ (ժամկետային՝ 4711.47 մլն դրամ):

Ռ. Նազարյան

?????? ????????
Jul 29 2015 4:44 PM

Կատարող՝ Լ.Հովհաննիսյան ☎528590 (348)